

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ս. ան Պարոնահայն համ Փոքր թուա-
հանայն Հայոց :

Օ ԱՐԾԱՆԱԾ, թէ որպէս ցանկա-
գոյնս ունեւոյ մեր 'ի նախնեաց զտու-
մարական արուեստէն բանս, մանաւանդ
որք զկնի Սարկաւազայ Սարգապետի
նորոգողի հայկական տօմարիս, և որք
'ի նորումս 'ի մէջ կամ յօտարաց՝ զնո-
ցին իրաց առին զրել, ոչ ինչ աւանդե-
ցին մեզ բացայայտակի զփոքունց կամ
զերկրորդն և զերրորդն անուանեալ
թուականաց Հայոց . մինչև բազմաց
անծանօթ մնալ, զի չասացից բոլորումն,
թէ որ այն իցէ փոքր թուականն զոր
վեր 'ի վայր յեղլեղէն տօմարագիրք
մեր 'ի հարեանցի . և ոմանց զմեծն և
զփոքր՝ մի թուական համարել : Սուր
ինձ թէ ոչ միայն այժմ առ մեօք՝ այլ
և յառաջնոցն մերոց 'ի յոլովից՝ զանխուլ
մնաց սա, էր ինչ որ առ տգիտութեան
և էր որ առ անհաւանութեան, և հա-
նուրց՝ կարծեմ առ կորստեան կամ խառ-
նման յիրահամարձակ գրչաց՝ հարա-
զատ տօմարագրութեանն Սարկաւա-
զայ, որ հայրն է պարունակական
թուականացն Հայոց : Բրդ ծանու-
ցուք 'ի կարճոյ՝ որ մեծն և որ փոքր
թուականքն Հայոց՝ որովք վարեցաւ
ազգս մեր, և ընդէր մեք Պարունա-
կականս կոչեցաք :

Ս 'ի է հասարակ և աշխարհաբարոզ
թուականն Հայոց, որոյ են այսօր ամբ
ԹՄՂԷ, հաստատեալ առ Սովսէսիւ
Բ կաթողիկոսիւ յամի տեառն 552,
թէպէտ և տօմարագիրք զսկիզբնն ա-
սեն 'ի 553 կամ 554 լեալ . այլ ստու-
գագոյն հաշիւք յիշատակարանաց և
արձանագրութեանց՝ և չափմունք նորա
պարունակաւ այսինքն է Հնգարիւրե-
կի շրջանաւ՝ հաւաստի առնեն զառա-
ջին թիւդ : Կոչի սա առ մերսն թիւ
կամ թուական Հայոց, տօմար Հայոց,
Յաբեթեան տօմար Հայոց . քանզի
յարգարումն տօմարին պատճառ եղև

զնեւոյ թուականին, և ոչ կարծիք
հերձման յընդհանրական եկեղեցւոյ՝
որպէս բաջաղեցին ոմանք և առ մեօք .
կոչի և Պարթև կամ պարթևական
թուական, և Խոսրովային թուական,
ոչ այնպէս կարծեմ զի առ Խոսրովաւ
Պարսից թագաւորաւ հաստատեալ և
զնորին առ զանուն, որպէս սակս քաջին
մերոյ Խոսրովու, հանգիտապատիւ Հայ-
կայ և Բրամայ արարեալ զնա ածան-
ցելով յազգս մեր զնորայն անուան կո-
չումն : Կոչի և Սեծ յետ փոքունցն
ծագելոյ և նորա անընդհատ յառաջ
խաղալոյ : Կոչեցաւ և Կոր, իբրու չէր
այլ յառաջագոյն քան զայն կարգեալ .
դարձեալ կարծեմ զի նա եղև սկիզբն
պարունակաւ չափման յետագայ ժամա-
նակին, որպէս և անցելոյն կամ հին ժա-
մանակի : Բանզի ընդ հուպ յետ հա-
տատութեան թուականիս մերոյ՝ հա-
տատեալ և Հնգարիւրեկի շրջանն, այն
է 532 ամաց, այնպէս գերահռչակե-
ցաւ սա և հաճոյ եղև, մինչև առնուլ
զայն իբրև միութիւն կամ չափ թուա-
կանի և ժամանակի՝ շրջանաւ հօլովե-
լոյ դարձադարձ, և այնու չափել և զան-
ցեալ դէպսն . այսպէս իմանամք զասել
հին տօմարագրի, « Ի խաչելութեան
,, Բստուածն բանի՝ Թ էր Հայ թուա-
,, կանն », . քանզի թէ կարգեսցուք պա-
րունակ մի, (զի այսպէս կոչեն մերքս
զշրջան 532 ամաց,) յառաջ քան զըս-
կիզբն հայ թուականիս, արդարև ին-
ներորդ ամ այնր պարունակի հանդի-
պի խաչելութեան Կենարարին :

Օ այս պարունակ առին մերքն հա-
տուած թուականի և մերոյս և օտա-
րաց . որպէս զի 'ի ընու 532 ամաց 'ի
թուականէ անտի՝ նոր թուական սկսաւ
նէին յերկրորդ ամէն . այսպէս 'ի լրա-
նալ ՀԼԲ Հայոց թուականիս՝ ('ի 1083)
սկսաւ նոր թուական Փոքրն մակաձայ-
նեալոր և Սարկաւազայն, 'ի ՀԼԳ թուիս
մերոյ և 1084 ամի փրկչին . և 'ի ընու
երկրորդ անգամ պարունակին 'ի ՌԿԴ
մեծ թուիս և 'ի ՀԼԲ փոքր թուին՝ սկը-
սաւ երրորդ պարունակ և երրորդ թուա-
կան, և ահա այս է Բջարիային, յամի

տեառն 1646 . և չորրորդ անգամ սկսա-
նի յետ երեքարիւրոց ամաց յամի 2148 :
Օայս օրէնս կալան մերքն և ընդ օտար
ազգաց թուականս , զոր օրինակ ընդ
Հռոմոնցն թուական , փոխանակ հա-
զարամեայ շրջանին նորա զհինգհա-
րիւրեակն մոծեալ . որպէս և ստորե
օրինակաւ յանդիմանեսցի : Բայց
և վասն Սրաց թուականին ասի . « Եւ
„ զթուականդ , և զշրջանն ՇԼԲ 'ի բաց
„ երթ ' փոքր թուական է Սրաց ' որ
„ կոչի Ռհնիկոն » : Բայց է ահա ա-
ղիկ դիւրիմաց գաղտնիսդ թուակա-
նացն Հայոց , և յայս սակս Պարունա-
կականս կոչեցաք :

Բայց ոչ վարկպարագի վերադարձ-
մունք պարունակին և եթ են պատ-
ճառք նորելոյ թուականացս Հայոց . զի
զինչ հարկ 'ի վերայ կայր ընդհատել
զմիահետ յառաջադիմութիւն թուա-
կանին մեծի , զոր ահա անընդհատ 'ի
կիր առնու ազգս համօրէն , և էր աղա-
գաւ զՊարկաւազայ և զՂարիայի ու-
րումն անուանս կարգել 'ի վերայ նորոց
հատուածեալ թուականացն : Ոչ վայ-
րապար , և ոչ առ շնորհակա ինչ նոցա .
այլ զի իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ ' որոց
անուն 'ի թուականսդ է , յաւարտել
պարունակացն ' նոր յարգարեցին տու-
մար Հայոց , վասն այնորիկ և նոր հա-
մարեցան թուական , և անուան նոցա
նուիրեցաւ այն :

Պարկաւազայն թուական որ և փոքրն
յորջորջն ' նոյն է ընդ Հայսմաւուրաց
տումարին , որոյ մուտ նաւասարդին ան-
կանի 'ի 11 օգոստոսի Հռոմոնց ամ-
սեան . վասն որոյ և առաջին ուղղիչ
Հայսմաւուրաց ինքն իսկ թուի լեալ
շատահանաւ և կորովամիտ սոփես-
տէան Հայոց , և յայն սակս թերեւս
չկայ յիշատակ նորա 'ի նոյն գիրս , ու-
րումարժան էր գտանիլ ըստ կարծեացն
եղելոց զկենաց նորա զայնու ժամանա-
կաւ : Եւ զայս որպէս և ախորժե ոք .
բայց ստուգութիւն այս է , զի առաջ
նոցն մերոց 'ի կարգել տումարին զազ-
գային և զարեւելայց հասարակ ամի
կալեալ և զանց զյուլեան նահանջիւքն

արարեալ 365 աւուրքք միշտ գումարե-
լով զտարին , յար 'ի փոփոխման և 'ի
խոտորման կային 'ի յունաց և 'ի հռո-
մոց տումարէն , ըստ չորից չորից ամաց
յառաջելով օր մի յամսոյ . վասն որոյ
Հառաջախաղաց կոչին ամիսք Հայոց :
Ոչ այնպէս դժպհի թուէր սխալակ տու-
մարիս 'ի քաղաքական բերման , որքան
յեկեղեցական կարգի վասն այլայլու-
թեան տօնից , որպէս զի բնաւ ան-
մարթ լինել ունեւ Հայոց անշարժ տօնս
ըստ աւուրց ամսոց և ըստ յեղանակաց
տարւոյն , այլ յեղեղելով ըստ ամսոց
պարտ էր մերթ զգլուխ տօնից մերոց
զՀայտնութիւն որ զուարթացուցին է
կարէճմուն տխրութեանց Հայաստա-
նի ' փոխել 'ի ջերտ աւուրս Բյւսկեր-
պութեան տօնին , և մերթ զայս ամե-
նապայծառ զամանորաբեր տօնս Հայոց
յամբուսաբեր սառամանիս կատարել :
Պարտ և պատշաճ էր ապա զարեւացն
առնուլ առաջս , որպէս անդստին բա-
զումանգամ փորձեցին և հնարեցան որ
յառաջ քան զՊարկաւազ ' վարդապետք
և հայրապետք . սակայն ոչ յաջողեցան
վասն չկարել հաւանեցուցանել զըմբու-
նեալն 'ի կանխակալոյ մոլորութեանն
սովորութիւն . և զի յոյժ դժուարին
էր դարձեալ յայսպիսի ծանր գործ
ձեռն արկանել և փոխել յայնպիսումն
անտէրունչ և անմի ժամանակի :

Բայց իբրեւ եհաս յաւարտ առաջին
պարունակն Հայոց , և վերստին սկսա-
նելոց էր տօմարն եկեղեցական որ հինգ
հարիւրեկաւն ուղղէր , ձեռն 'ի գործ
արար հանձարեղն այն որ և նորոգիչ
իմաստասիրութեան Հայոց մեծաց 'ի
մայրավանս Հաղբատայ , և հիւսեալ
տօմարագրութիւն լի և ճոխ , որպէս
կարծեմ , մեկնեալ և ցուցեալ զհին տու-
մարին զմիտս և զվրիպակս , և համե-
մատութիւն գործեալ ընդ տօմարաց
այլոց ազգաց , երեւցոյց յարդարեալ
զհին տօմարն Հայոց , որպէս ասէ Յով-
հաննէս Վառնեցի , որոյ տեսեալ էր 'ի
Հաղբատ զերկասիրութիւն ձեռաց Սար-
կաւազայ . և Վրիմեցին Յակոբ ասէ
« Սա զուսապայծառ տումարն շի-

„ նեաց „ և յառաջ քան զնոսա Վի-
 րակոս վարդապետ՝ այսպէս . “ Սա
 „ զբաւմաց փափաքելին և ոչ ձեռնհաս ,
 „ զհաստատ և զանշարժ տօմարն կար-
 „ գեաց Հայոց , փոխանակ շարժակա-
 „ նին և անհաստատոյն . արար և
 „ զմիաբանութիւն տօմարի ամենայն
 „ ազգաց ընդ Հայոց „ : Յայնմ նորո-
 գութեան մեծաւ նահանջ յեկեղե-
 ցական տումարն , և տարեգլուխն անո-
 ըիշ անկաւ 'ի 11 օգոստոսի . և զայս
 կարգ հաստատուն պահէն Յայսմա-
 ւուրք . և է տեսանել 'ի հին տօմարս ,
 յաղիւսակա և 'ի ծրաբողորս միաբանու-
 թեան տօմարաց ազգաց՝ առանձինն
 նշանակեալ զՍարկաւազայ ամամու-
 տըս , վերագիրս , այլովքն հանդերձ :
 Նանուցանեն լռելեայն իմն տօմարա-
 գիրք և զսկիզբն թուականին կարգելոյ
 'ի հեղինակէ տօմարին՝ ուսուցանելով
 առնել փոքր թուական այսպէս . “ Վալ
 „ զմեծ թուականն , ՇԼԳ 'ի բաց առ՝
 „ Սարկաւազայն է՝ փոքր Հայոյն „ .
 „ կամ “ փոքր թուական այսպէս արա .
 „ կալ զմեծ թուականն , և զըջանն
 „ ՇԼԲ 'ի բաց երթ , և որ մնայ՝ փոքր
 „ թուական է՝ Սարկաւազին „ :
 Եւ յսու թուականաւ սկսան վարիլ
 առաւելապէս վերին Հայք և Երցա-
 խային կողմանք , ուր ծաւալէր վարդա-
 պետութիւն մեծի իմաստասիրին . 'ի
 սմանէ թուի թէ և այլքն մտաբերեցին
 փոխանակ թուական կոչելոյ՝ զըջանն
 միայն յիշատակեալ նոր թուել շար ա-
 մաց . օրինակի աղագաւ յիշեսցուք զայ-
 սոսիկ . Վիրակոս թարգմանիչ մեկնու-
 թեան Յոհաննու յՍկեբերանէ՝ ե-
 դեալ 'ի յիշատակարանի նախ զմեծ
 թուականն Հայոց՝ ՇԿԶ , յաւելու .
 “ Իսկ ըստ աւարտման առաջնոյ շրջա-
 „ նին ՇԼԲ՝ նորս սկսեալ շար ամաց
 „ ԼԳ „ : Եւ Սիսիթար Վազ հայրե-
 նեօք և բնակութեամբ մերձակից Սար-
 կաւազայ՝ և ոչ հեռի 'ի վարդապետու-
 թենէն՝ յիւրումն յիշատակարանի գը-
 րոցն դատաստանաց . “ Ի թուականու-
 „ թեանս Հայոց ՈԼԳ . . . և շրջանին
 „ երթալոյ 'ի բաց՝ ՃԼ , որ կոչի փոքր „ .

և յայտ այսու առնէ զի Սարկաւազայ
 հետեի : Սեկին ևս յայտ յանդիման
 լինի փոքր թուականդ 'ի յիշատակա-
 րանի հոյակապ երկաթագիր մագաղա-
 թի ճառիցն օրբոյն Նարսդի գրելոյ 'ի
 նոյն 'ի Հաղբատ վանս 'ի վերջին ամս
 Շնորհաւոյն , և անդուստ նուիրելոյ
 մեզ 'ի պերճափայլ և քաջայաղթ Նար-
 կայնաբազուկ Երզնութեան իշխանէն ,
 որ է այսպէս . “ Գրեցաւ գիրքս 'ի
 „ թուականիս Հայոց նորումն ՁԹ ,
 „ իսկ Հոռոմոց ՅԼԳ , 'ի հայրապե-
 „ տութեան տեառն Վերսիսի Հայոց
 „ կաթողիկոսի . և 'ի թագաւորու-
 „ թեանն Սրաց և այլ բազում ազգաց՝
 „ Գեորգեայ որդւոյ Վեմետրէի „ :
 Երգ թուականս ՁԹ է փոքր թուա-
 կանին Սարկաւազայ , վասն որոյ և՛ Նոր
 կոչէ , որ է ՈԼԼ թիւն մեծ և 1172 ամ
 փրկչին . և ՅԼԳ թիւն է շրջանին Հո-
 ռոմոց՝ ոչ հաղարամեայ չափելոյ ըստ
 օտարաց , այլ պարունակաւ . քանզի
 սկիզբն Բ մեծի շրջանին այնորիկ լեալ
 առ Փիլիպպեաւ կայսերք իբր յ248
 թուին Վրիստոսի՝ աւարտէ զառաջին
 պարունակն ըստ Հայոց յ780 ամ նո-
 րին , և անտի մինչև յամս 1172 լինին
 393 ամբ : Սրիպեցաւ ոմն 'ի մերոց
 բանասիրաց չունելով զկարծիս փոքր
 թուականին , և համարեցաւ մեղա-
 պարտ զՍարգիս զգրիչ մատենիս , որ-
 պէս թէ տխմարաբար զաղափարեալ
 զՁԹ թիւ մեծի թուականին , զի զայն
 թիւ ունել համարէր նախադադարաբ
 գրոցն յորմէ Սարգիսն օրինակէր , և
 զՎերսէսն համարեցաւ զՇ ինոզն , և
 զՅԼԳ՝ բուն մեծ թուականն Հոռոմոց ,
 քանզի արդարեւ 'ի ՁԹ մեծ թուիս
 մերոյ 393 ամ էր շրջանին Հոռոմոց ,
 որպէս և 393 ամ էր պարունակին Հո-
 ռոմոց 'ի ՁԹ թուին Սարկաւազայ :

Պարունակն սկսեալ առ Սարկաւա-
 գաւ՝ լրացաւ յամին 1615 որպէս վերա-
 գոյնդ ասացաք . յայնժամ Մշարիա ոմն
 Սուղայեցի 'ի գաղթելոցն յաշխարհն
 Պարսից 'ի Նոր Սուղա , վերստին յար-
 դարեալ զտումարն ըստ այնր տեղոյն
 պիտոյից՝ սկսաւ նորով թուականաւ

զնոր պարունակին հինգ հարիւրէկին . զոր ոչ գիտելով այլոց՝ կարծեցին առ յիշատակէ գողթականին կամ շինուածեան նորոյն ջուղայ հաստատեալ զժողբրիկ թուականդ , որ յայս ամ մտանէ 'ի ՄԼԳԻ թիւ իւր , և զոր մարթ է այժմ ժողբր անուանել Ս'իջակ յայսմ հետէ զՍարկաւագայն կոչելով թիւ հայոց : Հանգամանք նորոգութեան տօմարին լջարիայի ոչ են մեզ լիովին քաջայայտ , այլ ընդ այն ոչ երկբայիմ զի սկիզբն նորոյ պարունակին շարժեաց զնա 'ի նորոգութիւնն :

Հ . Գ . Մ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԳԱՂԱԲԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՒԱԾ ԺԵ .

Փոխանակութիւն ¹ և լը ² :

ԻՈՒՈՐ աշխարհք փոխանակութիւն կը դառնայ . այսինքն ամէն մարդ իր շունեցած և իրեն պէտք եղած բերքը դիմացինէն կ'առնէ . և կամ ուրիշ անձ մը իր տեղը կ'առնէ . զոր օրինակ տալու տէր մը իրեններուն պէտք եղած ամէն բանը ինքը կ'առնէ . բայց նոյն է թէ անոնք իրենց համար առած ըլլային . ուստի փոխանակութիւնը մարդկային ընկերութեան շարժմանը անհրաժեշտ օրէնքներէն մէկն է՝ 'ի բնութեան հաստատուած : — Ի՞նչ փոխանակութիւնը թէպէտ և ամէն երկրի մէջ կ'ըլլայ , բայց անհամեմատ կերպով շատ կամ քիչ է զարգացեալ և կամ բարբարոս երկիրներու մէջ եղած փոխանակութիւնը . վասն զի ուր որ քաղաքականութիւնը առաջ կ'երթայ , ընկերութեան պիտոյքը կը շատնայ , որովհետեւ քաղաքականութեան հետ կապուած են խիստ շատ նոր կարօտութիւններ . ընդհակառակն յետնեալ երկիրներու մէջ

փոխանակութիւնը առջի աստիճանի հարկաւոր նիւթոց վրայ կեցած է :

Դողովրդեան մը երջանկութիւնը և ապրուստի դիւրութիւնը փոխանակութեան կամ ելից շատնալովը կ'ըլլայ . (եւ ըսելով ուրիշ բան չենք հասկընար՝ բայց եթէ ապրանքներուն քշուիլը , ելլելը .) փոխանակութիւնը շատնալու համար պէտք է որ որչափ կարելի է բերքերուն զինը աժընայ , այսինքն օգտակարութեան աստիճանը նոյն մնալով՝ արժէքին չափը նուազի : Սովորաբար երբոր հետամտութիւնը կը շատնայ , որ և իցէ ապրանքի մէջ կ'ուզէ ըլլայ՝ մէկէն ան ապրանքին զինը կը նուազի . և ահա դիւրութիւն ժողովրդեան . միանգամայն գործառուներն ալ իրենց վաստակը կ'ընեն . բայց հետամտաց թիւը շատնալով՝ հարկաւ վաստակն ալ մէջերնին կը բաժնուի :

Փոխանակութիւն ընելու համար պէտք է որ ամէն մարդ ալ փոխանակելի նիւթին դիմացը դնելու համար բերք մը հաստէ : Իսածս ամենապարզ է . սովորաբար բերք մը գնելու ատեն ինչ կուտաս . — դրամ . — դրամը ինչով ձեռքդ անցած է . — հարկաւ նիւթաւ կան կամ աննիւթ բերք մը տալով անոր տեղը . ուրեմն նոր բերք գնելու տուած դրամդ առջի բերքիդ աժէքն է , ուրեմն առանց բերքի բերք չանցնիր մարդու ձեռքը , ուրեմն ստոյգ է Սէյին առածը , “ Ի՛նքեքը բերքերով կը գնուին ” : — Ի՛նքեք մէկը եկամուտով ապրող մարդիկը աս բանիս մէջ մեզի օրինակ բերէ . բայց պիտի գիտնանք որ բերք հաստելու համար հարկ չէ որ մարդս միշտ անձամբ աշխատի . իրեն ինչքը որոնց որ յանձնուած է՝ անոնք իր տեղը կը հաստեն . այսինքն կալուածի տիրոջ համար իր վարձուորը կը հաստէ , ընչատուին տեղ՝ ինչքը առնողը , դրամուտան մէջ դրամագլուխ ունեցողին համար՝ դրամատան մարդիկը , և այլն :

¹ Échange.

² Débouche.